Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1411/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«10» մայիսի 2023 թվական **քաղաք Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ժ. Ասատրյանս, ծանոթանալով «Լեվել-Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ «ՀՀ դատական դեպարտամենտի՝ «Լեվել-Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 20.03.2023 թվականի թիվ 3 որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին հայցադիմումին,

ՊԱՐԶԵՑ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) հայցադիմումն ստացվել է և դատավորին մակագրվել 20.04.2023 թվականին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել է 26.04.2023 թվականին (հիմք՝ գործի կարգագիրը):

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 28.04.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության՝ հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի 11-րդ կետում անդորրագրեր նշված լինելու պարագայում մեկ անդորրագիր կցված լինելու, մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել այն:

28.04.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ Դատարանի գրասենյակի դրոշմակնիքը Մ-4089/23), իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել է 02.05.2023 թվականին, իսկ դատավոր Ժ.Ասատրյանը 01.05.2023 թվականից մինչև 05.05.2023 թվականը ներառյալ մասնակցել է դատավորների տարեկան վերապատրաստման դասընթացներին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ, 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Դատարանը գտնում է, որ «Լեվել-Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայցադիմումը պետք է ընդունել վարույթ, միաժամանակ ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բոլոր ապացույցները՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող:

Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի, 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

1. «Լեվել-Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ «ՀՀ դատական դեպարտամենտի՝ «Լեվել-Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 20.03.2023 թվականի թիվ 3 որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «ԷԱՃԱՊՁԲ-2022/15-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ դատական դեպարտամենտն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ**